ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 98-րդ և 99-րդ հոդվածները, ներկայացնում եմ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության հեղինակած ««Հայաքվե» քաղաքացիական նախաձեռնության առաջադրած օրակարգային հարցի մասին»» Ազգային ժողովի հայտարարության նախագիծը (հիմնական զեկուցող Արծվիկ Մինասյան)՝ այն սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նպատակով:

Առդիր՝ հայտարարության նախագիծը, նախագծի հիմնավորումը և «Հայաստան» խմբակցության որոշումը (նիստի արձանագրությունից քաղվածքը):

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

13.11.2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

««ՀԱՅԱՔՎԵ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Քաղվածք խմբակցության նիստի արձանագրությունից)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածի 2-րդ կետով և 99-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ «Հայաստան» խմբակցության հեղինակած «Հայաքվե» քաղաքացիական նախաձեռնության առաջադրած օրակարգային հարցի մասին» Ազգային ժողովի հայտարարության նախագծին և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ (կցվում է):

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հայտարարության նախագծով հիմնական զեկուցող նշանակել «Հայաստան» խմբակցության անդամ Արծվիկ Մինասյանին:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

10.11.2023թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅԱՔՎԵ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 98-րդ հոդվածը.

Արժևորելով Սահմանադրության 109-րդ և 204-րդ հոդվածներով ամրագրված քաղաքացիական նախաձեռնությունների իրավունքը՝ առաջադրելու օրենսդրի կողմից օրենքի և/կամ սահմանադրի կողմից հանրաքվեի ակտի ընդունում.

Կարևորելով քաղաքացիական (ժողովրդական) նախաձեռնությունների դերն ու նշանակությունը քաղաքացիների կողմից պետության կառավարմանը անմիջականորեն մասնակցելու գործում, հատկապես այն հարցերով, որոնք վերաբերում են համազգային նպատակներին, ուղղված են Հայաստանի Հանրապետության անկախության մասին հռչակագրով և Սահմանադրությամբ ամրագրված Հայաստանի Հանրապետության ազգային նպատակների, ինչպես նաև Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերով ստանձնած ազգային, պետական քաղաքական հանձնառությունների կատարմանը.

Նպատակ ունենալով զարգացնել Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ինստիտուտները, ինչպես նաև Կառավարության ծրագրով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ քաղաքացիական վերահսկման համակարգը.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

Արձանագրում է.

1. «Հայաքվե» քաղաքացիական (ժողովրդական) նախաձեռնությունը առաջադրել է Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգրքում լրացումների նախագիծ, որի համաձայն հատուկ նորմով քրեորեն պատժելի արարքներ են որակվում Հայաստանի Հանրապետության անունից Արցախը որևէ այլ պետության կազմում

ճանաչելն ու Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը կամ դրա վտանգավորությունը նսեմացնելը:

2. Չնայած բազմաթիվ օրենսդրական անկատարություններին և իրավակիրառ խոչընդոտներին՝ «Հայաքվե» քաղաքացիական (ժողովրդական) նախաձեռնությանը միացել են Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն ընտրական իրավունք ունեցող հիսուն հազարից ավելի ՀՀ քաղաքացիներ (փաստացի ստորագրել են շուրջ 58 հազար քաղաքացիներ):

3. «Հայաքվե» քաղաքացիական (ժողովրդական) նախաձեռնության առաջադրած օրինագծով պաշտպանվող ազգային և պետական շահը՝ այն է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը և Հայոց ցեղասպանության դատապարտումն ու հետապնդումը, թեև արդեն իսկ ներառված են Հայաստանի Հանրապետության անկախության մասին հռչակագրում և ՀՀ Սահմանադրությունում որպես անժամկետ ազգային նպատակներ, վերահաստատված են Հայաստանի Հանրապետության օրենսդիր մարմնի 1992 թ. հուլիսի 8-ի որոշմամբ, ինչպես նաև դրանց ապահովմանն ուղղված քրեաիրավական գործիքակազմով, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով, այդուհանդերձ նախաձեռնության առաջադրած Քրեական օրենսգրքի հատուկ նորմի ամրագրումը առավել հստակեցնում է կոնկրետ անթույլատրելի գործողությունները և հավելյալ կռվան է՝ հակազդելու Ադրբեջանի կողմից որդեգրած ցեղասպան վարքագծին, դրան հակադրելով Հայաստանի Հանրապետության ժողովրդի հավաքական կամքը և ժողովրդավարական գործելաոճը:

Հայտարարում է

1. Ողջունում է «Հայաքվե» քաղաքացիական նախաձեռնությունը, որպես Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական այդ կարևորագույն ինստիտուտի գործադրման առաջին հաջողված նախադեպ: Նման նախաձեռնությունների հաջողությամբ է նաև պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական կարգի ամրապնդումը և ժամանակակից իրավական պետության կայացումը:

2. Անհրաժեշտ է գտնում հետևողականորեն զարգացնել քաղաքացիական նախաձեռնությունների իրացմանն ուղղված օրենսդրական կարգավորումները՝ ընդունելով այնպիսի օրենսդրական փոփոխություններ, որոնք կապահովեն միջազգային լավագույն փորձի

ներդրումը Հայաստանի Հանրապետությունում, այդ թվում իրացնելով «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) առաջարկությունները, որոնց համաձայն քաղաքացիական (ժողովրդական) նախաձեռնությունների դեպքում խորհրդարանը պետք է սեփական առաջարկները կատարի ներկայացված նախագծի վերաբերյալ, եթե խորհրդարանի մեծամասնությունը առարկում էդրան , որոնք միաժամանակ քվեարկության կդրվեն ներկայացված նախագծի հետ մեկտեղ:

3. Հույժ կարևորելով Հայաստանի Հանրապետության շուրջ 58 հազար քաղաքացիների ազատ կամարտահայտությամբ ներկայացված նախագծով հետապնդվող նպատակը՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի պաշտպանության և երկրում ժողովրդավարության արմատավորման տեսանկյունից, որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդի բարձրագույն ներկայացուցչական մարմին՝ ձեռնարկելու է անհրաժեշտ քայլեր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար պայքարում, ինչպես նաև Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացված նորօրյա ցեղասպանության, էթնիկ զտումների, Արցախի ժողովրդին իր պատմական հայրենիքից բռնի տեղահանման և Արցախի տարածքները բռնազավթելու իրողությունն արձանագրելու և դրան հետևողականորեն հակազդելու, ինչպես նաև դրա բոլոր հետևանքները վերացնելու ուղղությամբ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայտարարության անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ՀՀ սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիների կողմից պետության օրենսդրական գործունեությանը ուղղակի մասնակցության հնարավորության առաջին հաջողված փորձի կարևորմանը, այնպես «Հայաքվե» նախաձեռնության կողմից առաջադրված ազգային-պետական կարևորագույն 2 օրակարգային հարցերին՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանությանը և Հայոց Ցեղասպանության նսեմացման դեմ պայքարին:

Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը 1988 թվականից սկսած եղել է Հայաստանի իշխանությունների պաշտոնական քաղաքականությունը՝ վերածվելով համազգային նպատակի՝ ամրագրվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախաբանում: Արցախի Հանրապետության դեմ դեռ 90-ականներին Ադրբեջանի ծավալած լայնածավալ ագրեսիայի պայմաններում 1992 թ. հուլիսի 8-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, «հիմնվելով միջազգային իրավունքի հիմնադրույթների, ազգերի ինքնորոշման իրավունքի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների վրա», որոշեց «հետևողականորեն սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը» (Գերագույն Խորհրդի Տեղեկագիր, 1992/13): 1992 թ. հուլիսի 8-ի որոշման 2-րդ կետը նաև հստակորեն սահմանում է՝ «Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»:

Ավելին, արդեն 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո, 2021 թ. ընդունված Կառավարության 5-ամյա ծրագրում ամրագրված է, որ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորումը Կառավարությունը տեսնում է Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցմամբ, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո և Մադրիդյան սկզբունքների հիման վրա, իսկ Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է լինել Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը:

Ներկայումս, երբ Արցախի Հանրապետությունը հայազրկվել է 2020 թ. սեպտեմբերի 27-ին նրա դեմ Ադրբեջանի կողմից սկսած պատերազմի, Արցախի 9-ամսյա շրջափակման և 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից սկսված լայնածավալ ռազմական ներխուժման, Արցախի ժողովրդի ցեղասպանությունն ու էթնիկ զտումները ավարտին հասցնելու մտադրությամբ իրականացրած բռնագաղթի հետևանքով, կրկին կարևորվում է Հայաստանի Հանրապետության կողմից Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի աջակցությունը, և հետևողական ջանքերը՝ օկուպացիայի պայմաններում վերականգնելու նրա սուբյեկտայնությունը և վերադարձնելու նրա իշխանություններին բանակցային գործընթաց:

Այս համատեքստում, կարևոր նշանակություն է ստանում «ՀայաՔվե» քաղաքացիական օրենսդրական նախաձեռնության կողմից ներկայացված օրենքի նախագիծը, որով քրեորեն պատժելի արարքներ են որակվում Հայաստանի Հանրապետության անունից Արցախը որևէ այլ պետության կազմում ճանաչելն ու Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնելը: Այն հավելյալ կռվան է հանդիսանում՝ հակազդելու Ադրբեջանի կողմից որդեգրած ցեղասպան վարքագծին, ինչպես նաև դիմագրավելու Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը, Հայոց պետականությանը ներկայացված սպառնալիքները՝ դրանց հակադրելով Հայաստանի Հանրապետության ժողովրդի հավաքական կամքը և ժողովրդավարական գործելաոճը: Նախաձեռնության կողմից առաջ քաշված այս օրենսդրական փոփոխությունները նպատակ ունեն ապահովել և քրեաիրավական հատուկ նորմ հանդիսացող գործիքակազմով պաշտպանել ՀՀ գործող սահմանադրության և ՀՀ Անկախության հռչակագրով, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդի որոշումներով ամրագրված պարտավորությունները, որոնք ՀՀ-ն իր վրա է վերցրել՝ Հայ ժողովրդի անվտանգության ապահովման և անժամկետ ազգային նպատակների իրականացման հարցերում:

Հայտարարությունում հատուկ ընդգծվում է, որ գործող Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերը իրենց նախընտրական ծրագրերում ընդգծված ամրագրել են Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանությունը:

Այսպես, «Հայաստան դաշինքի» նախընտրական ծրագրում նշվում է *(մեջբերում)*. ...խաղաղ բանակցությունների նոր փուլով հասնել արցախյան հիմնախնդրի արդարացի լուծմանը, ջանքեր գործադրելով ԵԱՀԿ Մինսկի համանախագահների միջնորդությամբ բանակցային գործընթացի վերսկսման համար՝ նպատակաուղղված ինքորոշման իրավունքի հիման

վրա Արցախի տարածքի վերականգնմանը և ՀՀ հետ երաշխավորված ցամաքային անվտանգ կապի ապահովմանը:

«Պատիվ ունեմ դաշինքի» նախընտրական ծրագրում մասնավորապես նշվում է *(մեջբերում).* Արցախյան հիմնախնդրի վերջնական կարգավորումն ու տարածաշրջանի կայուն զարգացումը հնարավոր է բացառապես Արցախի բնակչության անվտանգության ու բոլոր հիմնարար իրավունքների հարատև ապահովման և Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման արդյունքների ճանաչման միջոցով:

ԱԺ-ում մեծամասնություն կազմող «Քաղաքացիական պայմանագրի» նախընտրական ծրագրում մասնավորապես նշվում է*(մեջբերում)*

- Մոտակա տարիներին մեր գլխավոր խնդիրը պետք է լինի ..... Արցախի ժողովրդի անվտանգության ապահովումն ու Ղարաբաղյան հակամարտության խաղաղ և համապարփակ կարգավորումը՝ հիմնված Արցախի ժողովրդի ինքնորոշման՝ առանց սահմանափակումների իրականացման վրա, որը բխում է Արցախի ժողովրդի գոյութենական վտանգներին դիմակայելու անհրաժեշտությունից: Այն փաստը, որ մարդու իրավունքների զանգվածային խախտումների և զանգվածային ոճրագործությունների հետևանքով հայաթափվել են Արցախի բոլոր այն տարածքները, որտեղ հաստատվել է ադրբեջանական վերահսկողություն, մատնանշում է, որ Արցախի ժողովուրդը չի կարող գոյատևել Ադրբեջանի ենթակայության ներքո:
- Ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը տեսնում ենք Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացման և Արցախի կարգավիճակի վերջնական հստակեցման տեսքով՝ առաջնորդվելով «Անջատում հանուն փրկության» սկզբունքով:
- Հայաստանի Հանրապետությունը շարունակելու է լինել Արցախի ժողովրդի անվտանգության երաշխավորը և շարունակելու է աշխատել Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության ուղղությամբ:
- Արցախյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման համար առանցքային կարևորություն ենք տալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափի շրջանակներում բովանդակային բանակցությունների անցկացմանը: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը հիմնախնդրի կարգավորման միակ ընդունված միջազգային ձևաչափն է:
- Բանակցային գործընթացում Հայաստանի առաջնահերթություններից է լինելու այն տարածքների դեօկուպացիան, որի վրա ինքնորոշվել է Արցախի ժողովուրդը, նախևառաջ նախկին ԼՂԻՄ

բնակավայրերի վերադարձն Արցախի վերահսկողության ներքո՝ խաղաղ, բանակցային ճանապարհով, ինչը հնարավորություն կտա տեղահանված անձանց վերադառնալ իրենց տները:

Իսկ ՔՊ կողմից ձևավորած Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թ.թ. գործող ծրագրի՝ Ղարաբաղյան հիմնախնդիր անվանումը կրող 1.2-րդ բաժնում ինչպես վերը նշվեց ամրագրված է *(մեջբերում).*

- Առաջիկա տարիներին Կառավարության գլխավոր խնդիրը պետք է լինեն ԼՂ ժողովրդի անվտանգության ապահովումն ու Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ և համապարփակ կարգավորումը: Ղարաբաղյան հիմնախնդրի վերջնական կարգավորումը Կառավարությունը տեսնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցմամբ՝ հայտնի սկզբունքների և տարրերի, այդ թվում՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Այսինքն, գործող ԱԺ-ի պայմաններում քաղաքական լեգիտիմության ապահովման համար պարտադիր է, որ ԱԺ-ում ներկայացված քաղաքական ուժերը ընդունեն ներկայացված հայտարարությունը և քաղաքացիական նախաձեռնության կողմից ներկայացված օրենսդրական նախագիծը: Դրանք չընդունելու դեպքում, ինչը պայմանավորված է հիմնականում քաղաքական մեծամասնության վարքագծով, վերջինս պարտավոր է նախընտրական ծրագրով, ինչպես նաև կառավարության ծրագրով ստանձնած հանձնառություններին համապատասխան ներկայացնել դրանք ապահովող այլ նախաձեռնություններ: Հակառակ դեպքում՝ գործող ԱԺ-ն ի դեմս քաղաքական մեծամասնության կհաստատի իր քաղաքական ոչ լեգիտիմ լինելը՝ փաստելով ընտրողներին տված իր խոստումներից հրաժարվելու և Հայոց պետականության վերաբերյալ կարևորագույն հարցերում ի վնաս ազգային ու պետական շահին գործելու մասին:

Բացի այդ, հայտարարության նախագծում կարևորվել է նաև քաղաքացիական (ժողովրդական) նախաձեռնության սահմանադրական իրավունքի իրացմանն ուղղված օրենսդրական և իրավակիրառ խոչընդոտների հաղթահարման անհրաժեշտությունը, որը նույնպես ԱԺ գործունեության տիրույթում է: